

## ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱԾԵԱՆ – II VERDI ARMENO

1898 թուական, 23-ը մարտի: Զմիւռնիայում ծանր տառապանքներից յետոյ, 61 տարեկան հասակում, դէմքի քաղցկեղից մահանում է հայոց օպերայի (պատմառումանտիկական, կոմիկական, հիբիաթային) հիմնադիր, հանճարեն՝ կոմպոզիտոր, չնորհաշատ դաշնակահար, տաղանդաւոր դիրիժոր, վաստակաշատ մանկավարժ, եռանդուն հասարակական գործիչ եւ կազմակերպիչ Տիգրան Չուխանեանը: Իսկ մինչ այդ... մահուան մահճում կոմպոզիտորն իր սնարի մօտ հերթապահող Սմբատ Քէսէճեանից խնդրել էր իր սիրութիւն մաեստրոյի՝ Չուզեպպէ Վերդիի հեղինակած «Օթելլոյ» երաժշտական դրամայի պարտիտուրը, գրկել այն, սեղմել կրծքին ու հրաժեշտ տուել երկրային կեանքին... Կարճ ժամանակ անց «Նըշանաւոր հանգուցեալք» խորագրի ներքոյ «Բազմավիշպում» զետեղում է «Հայ Վերտին» վերնագրով յօդուածը: Տարիներ անց, արդէն 1909 թուականին Բոլոնիայի թերթերից մէկում լոյս է տեսնում իտալացի քննադատ Ռիկկարդոյ թորենի «Il Verdi Armeno» վերտառութեամբ յօդուածը:

Արդ, փորձենք տարիների հեռուից բացայատել այն կոռուանները, որոնք հիմքեր տուեցին ժամանակակիցներին եւ Ռիկկարդոյ թորենին՝ Չուխանեանին անուանելու հայկական վերդի:

Չուխանեանի մասին պահպանուած ժլատ տեղեկութիւնները վկայում են, որ ապագայ կոմպոզիտորի դաշնամուրի ու երաժշտութեան տեսութեան առաջին ուսուցիչն էր պոլսաբնակ իտալացի դաշնակահար Մանձոնին: Նրա խորհրդով եւ յանձնարարականով էլ Միլանի կոնսերվատորիայում ուսումը շարունակելու եւ բարձրագոյն երաժշտական կրթութիւն ստանալու ակնկալութեամբ Չուխանեանը 1862 թուականի սեպտեմբերին մեկնում է իտալիա:

Կոմպոզիտորի կենսագրական կցկառուր տուեալները լիովին չեն բացայայում Միլանում նրա ուսումնառութեան հետ կապուած մանրամասները՝ սնունդ տալով կենսունակ մի շարք վար-

կածների: Դրանցից մէկի համաձայն Զուխաճեանն աւարտել է Միլանի կոնսերւատորիան, միւսի համաձայն՝ աշակերտել Զուգեպէպէ Վերդիին, ինչը, մեր կարծիքով քիչ հաւանական է, քանի որ իտալացի մասստրոյի բազմաթիւ կենսագիրների վկայութեամբ Վերդին մասնաւոր դասեր չի տուուել, իր երկարատեւ կեանքի ընթացքում ունեցել է լոկ մէկ աշակերտ, որը հետագայում դարձաւ յայտնի դիրիժոր:

Սակայն անհերքելի ճշմարտութիւնն այն է, որ Զուխաճեանն իրեն համարել է Վերդիի հեռակայ աշակերտը, նրա հոգեւոր սանը: Երաժշտարուեստում կատարած առաջին քայլերից արդէն Զուխաճեանն ու Վերդին իրենց ճակատագրերում ունեցան մէկ ընդհանրութիւն. Վերդիին բախտ չկիմակուեց ընդունուել Միլանի կոնսերւատորիան, ստանալ բարձրագոյն երաժշտական կրթութիւն: Նա բաւարարուեց Լաւինեայի մօտ մասնաւոր պարապմունքներով և օպերային Օլիմպոսը նուաճեց ինքնակըրթութեամբ՝ չնորհիւ իր հանճարի ուժի: Զուխաճեանը նոյնպէս չսովորեց բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում, բայց ստեղծեց երաժշտական թատրոնի գոհարներ՝ ապաւինսելով օպերային դրամատուրգի իր ասաւուածատուր ձիրքին և շռայլ մեղիդիական մտածողութեանը:

Թէ՛ Զուխաճեայնի և թէ՛ Վերդիի ստեղծագործական հետաքրքրութիւնների կիզակէտում յարատեւ գտնուել է երաժշտական թատրոնը: Բայց ի տարբերութիւն հանճարեղ իտալացու, որն ապեց երկարատեւ ու քեղուն ստեղծագործական կեանքով՝ 54 տարիների ընթացքում գրելով 26 օպերա, Զուխաճեանը հեղինակեց ընդամէնը 6-ը՝ ունենալով ստեղծագործական համեմատաբար կարճատեւ՝ քառորդ դար տեւած կեանք: Հետաքրքրական է, որ երկու երաժշտական էլ օպերային արուեստում իրենց ստեղծագործական վերջակէտը գրեցին նոյն 1893-ին՝ 80-ամեայ Վերդին «Ֆալստաֆ» կոմիկական օպերայով, իսկ 56-ամեայ Զուխաճեանը՝ «Զեմիրէ» հէքեաթ-օպերայով:

Անկասկած, Վերդիի ստեղծագործութիւնը 19-րդ դարի իտալական օպերայի զարգացման բարձրակէտն է: Նոյն դերն էր վերապահուած Զուխաճեանի երաժշտական թատրոնին՝ հայ երաժշտութեան մէջ: Ի տարբերութիւն իր Ուսուցչի, որը յենուեց իտալական օպերայի նախընթաց տեւական զարգացման և հարուատ աւանդութների, իր անմիջական նախորդներ Ռոսսինիի, Բելլինիի եւ Դոնիցետտիի ստեղծագործական նուաճումների վրայ, Զուխաճեանը հայ օպերային երաժշտութեան մէջ չունէր նախորդ-

ներ. նրա առաքելութիւնը հէնց հայոց օպերային արուեստի սկզբ-նաւորումն էր:

Յայտնի է, որ Վերդիի գեղագիտական հայեացքները ձեւա-ւորուեցին իտալական յեղափոխական ռոմանտիզմի ազդեցութեան տակ, որն առաջ էր քաջում արուեստի եւ արդիականութեան սերտ կապի, ժողովրդին՝ արուեստի մատչելիութեան գաղափարը:

Վերդին ապրեց երկարատեւ ու բացառիկ բեղմնաւոր կեանք, մինչեւ կեանքի վերջն ապշեցնելով շրջապատի մարդկանց մտքի չխուլացող սրութեամբ եւ անպարտելի կենսասիրութեամբ: Դեռևս պատանեկութեան շրջանում ձեւաւորուած համոզմունքներին մաեստրոն հաւատարիմ մնաց ողջ կեանքում: Որպէս ջերմ հայրե-նասէր ու իսկական դեմոկրատ նա մնաց մինչեւ մահը. այն տա-րիներին, երբ իտալիան պայքարում էր աւստրիական կեղեքիչնե-րի դէմ, Վերդին ծառայեց հայրենիքի ազատագրութեան գործին թէ՛ իբրեւ քաղաքացի, թէ՛ իբրեւ արուեստագէտ:

Վերդիի ստեղծագործութիւնը, որն անբաժան էր յանուն ա-զատութեան, անկախութեան եւ ազգային համախմբման՝ իտալա-կան ժողովրդի պայքարից, երբեք չխզեց կապը Ռիսորջիմենտոյի հզօր գարաշընանի հետ: 1831թ. Զուգեակ Մաձինիի գլխաւորու-թէամբ ստեղծուած «Երիտասարդ իտալիա» յեղափոխական ընկե-րութիւնն առաջ քաշեց յատակ պահանջ՝ ժողովրդական ապստամ-բութեան միջոցով ստեղծել միացեալ անկախ իտալիա: Ոտք դնե-լով Ռիսորջիմենտոյի շրջան, երկիրն արթնանում էր, ազատագ-րական շարժումն ստանում մասսայական բնոյթ: Եւ հայրենասէր կոմպոզիտորը, իր ժողովրդի իսկական զաւակ Վերդին դարձաւ ի-տալական յեղափոխութեան մաեստրոն, իսկ նրա հոգեւոր սան՝ Տ. Զուխաճեանը՝ 19-րդ դարի երկրորդ կէսի արեւմտահայու-թեան ազգային-ազատագրական պայքարի երդիչը:

Զուխաճեանի հայրենասիրական երգերից մեծ տարածում գլ-տան «Քնար հայկական» երաժշտական հանդէսի երկրորդ շրջանի՝ N3-ում տպագրուած «Երգ թատերական. Օն մեր նախնի» (խօսք՝ Խասդիւղի Ներսիսեան վարժարանի հայկաբանութեան, իտալերէնի եւ ֆրանսերէնի ուսուցիչ Գարեգին Զակրաստճեանի, 1859), 1867թ. փետրուարի 28-ին, «Արեւելեան թատրոնում»՝ յընթացս Մ. Նալ-բանկեանի մահուան առաջին տարեղարձին ծօնուած Ռ. Սետեֆ-ճեանի «Վարդան Մամիկոնեան, փրկիչ հայրենեաց» ողբերգու-թեան ներկայացման հնչած «Ազատն աստուած այն օրից» երգը: «Լնըլեբիջի Հօր-Հօր աղա» կոմիկական օպերայի երրորդ գործո-

ղութիւնից լերեբիջիների N17 «Մենք Քէօոօղու զաւակներն ենք» հանրայայտ խմբերգը, անջատուելով օպերայից, ինքնուրոյն կեանքի ուղեգիր ստացաւ եւ տարածուեց օպերայի գլխաւոր դերակատար Մարտիրոս Մնակեանի հեղինակած հայերէն տեքստով՝ «Արդար զայրոյթ» վերնագրով։ Չուխաճեանի հայրենասիրական քնարի թրթիւնների բարձրակիտը դարձաւ «Զէյթունցիների քայլերգն» է զէյթունցի հերոս բանաստեղծ Յարութիւն Զադրեանի տեքստով, որը կեանքի կոչուեց 1862թ. Զէյթունի հերոսամարտի կապակցութեամբ՝ դառնալով հայոց ազգային հայրենասիրական երգերի դեռեւ չգերազանցուած գագաթը։


Վերդիի եւ Չուխաճեանի ստեղծագործական ճակատագրերում կայ մէկ ընդհանրութիւն եւս։ Թէ՛ Վերդիի կեանքի օրօք, թէ՛ մահից յետոյ իտալիան չծնեց նրա հանճարի ուժին եւ նշանակութեանը համարժէք կոմպոզիտոր։ Դարակազմիկ էր նաեւ Չուխաճեանի յայտնութիւնը յետամնաց թուրքիայում։ Նա բացառութիւն էր նաեւ արեւմտահայ իրականութեան մէջ. ո՛չ նրանից առաջ էր ո՛չ էլ յետոյ նրան հաւասար կոմպոզիտոր երեւան չեկաւ։ Իր սանդհագործութեամբ նա նշանաւորուեց հայ երաժշտութեան զարգացման մէջ մի ամբողջ դարաշրջան։

Վերդիի եւ Չուխաճեանի ամենահական ընդհանրութիւնն այն է, որ երկուսն էլ օպերային խոչոր դրամատուրգներ էին։ Վերդիի դրամատուրգիական հանճարի դրսեւորման մասին գրուել է բազմաթիւ անգամներ, իսկ Չուխաճեանը ցարդ ըստ էութեան գնահատուած չէ ըստ արժանաւոյն։ Փորձենք բացայացնել նրա օպերային դրամատուրգիայի առանձնայատկութիւնները հէնց առաջին՝ «Արշակ Բ» օպերայի օրինակով։ Չուխաճեանն իր օպերայում առաւելագոյնս դրսեւորեց օպերային դրամատուրգի տաղանդը, ինչով օժտուած են կոմպոզիտուրներից քէնրը։

Չուխաճեան-դրամատուրգի բարձրագոյն նուաճումներից է օպերայի երրորդ գործողութեան ֆինալը՝ գերեզմանոցի տեսարանը։ Արշակին ներկայացած Ուրուականների երաժշտական բնութագիրը կերտելիս Չուխաճեանը զարտուղող սեկունցիաների յաջորդականութիւնից ստեղծել է խաչ կազմող տոնայնութիւնների շարք։

Ուրուականների լայթհարմոնիայի հնչիւնների tremolo-ների ուղեկցութեամբ յայտնուամ է Առաջին Ուրուականը («Ե՞ս քո Տիրան հայրդ եմ») ց հնչիւնի կրկնութեամբ, որին յաջորդում է երկրորդ Ուրուականը («Զե՞ս ճանչնար Գնէլ») առ հնչիւնի կրկնու-

թեամբ, ապա հանդէս է գալիս Ուրուականների խումբը («Դաւաճանութեանդ զոհ եղած նախարարաց ցեղն ենք»)՝ և հնչիւնի կրկնութեամբ։ Երթը եզրափակում է Արշակի վաղամեռիկ միակ որդու Ուրուականը («Ո՞ւր է մայրս, ո՞վ յափշտակեց զիս անոր անոյշ գրկէն»)՝ վերստին ց հնչիւնի կրկնութեամբ։ Ի մի բերելով Արշակին ներկայացած Ուրուականների երաժշտական բնութագիրը, պարզւում է, որ Զուխաճեանը հնչիւններով ստեղծել է խաչ՝ g - as - f - g



Խաչ կազմող հնչիւնների, նաեւ՝ տոնայնութիւնների օգտագործումը կոմպոզիտորի կողմից լիովին համապատասխանում է խաչերով առատ գերեզմանոցի տեսարանին, որտեղ ծաւալում են զարհութելի իրադարձութիւնները։ Ցաւօք, 1945-ին իրականացուած «Արշակ Բ»-ի նոր խմբագրութեամբ բեմադրութեան ընթացքում Ա. Գուլակեանի գրած լիբրետոյին համապատասխան լիովին դուրս մղուեց դրամատուրգիական փայլուն լրտծում ստացած այս տեսարանը՝ մինչեւ օրս անյայտ մնալով Զուխաճեանի երաժշտութեան երկրպագուների համար։

Դրամատուրգիական կարեւոր առաքելութիւն ունի վարընթաց սեկունդաներով քրոմատիկ «սողացող» ակորդների շարքը, որն ուղեկցելով հերոսներից մէկին՝ գուժում է յաջորդ գործողութեան մէջ նրա սպանութիւնը։ Այս սկզբունքը կիրառուած է ոչ թէ էպիզոդիկ, այլ հետեւողականօրէն՝ ամէն անդամ պահպանելով նուագախմբային «հանդերձանքը»։ Այսպէս, 1-ին գործողութեան ֆինալի դրամատուրգիական գագաթի՝ իշխան Գնէլի եւ սպարապետ Վաղինակի վրէժի զուգերգի ընթացքում նուագախմբանը հնչում է «սողացող» շարքը՝ Գնէլը սպանում է յաջորդ՝ 2-րդում հնչում է «սողացող» շարքը՝ Գնէլը սպանում է յաջորդ՝ 3-րդ գործողութեան ֆինալում։ Քրոմատիկ վարընթաց ակորդների շարքը հնչում է 3-րդ գործողութեան մէջ 2 անգամ՝ Օլիմպիակի

ողբի ժամանակ եւ ֆինալում՝ գերեզմանոցի տեսարանում։ Օլիմպիան եւ Արշակը սպանուում են յաջորդ՝ 4-րդ գործողութեան ֆինալում։

Յատկանչական է Գնէլի անէծքն օպերայի 2-րդ գործողութիւնից, որն իրեն վերապահուած դրամատուրգիական կարեւոր նշանակութեամբ եւ ոլիթմախիստոնացիան կառուցուածքով աղերսւում է Մոնտերոնէի անէծքին՝ Վերդիի «Ռիգոլետոյ» օպերայից։ Հարազատ մնալով Գնէլին բնութագրող տոնայնական ոլորտին՝ Չուխաճեանն անէծքի համար ընտրում է սոլլ-ը՝ նկատի ունենալով ողբերգական կերպարների բացայալուման վերջինիս հնարաւորութիւնները։ Ի դէպ, նոյն տոնայնութեան մէջ էր նաեւ Մոնտերոնէի անէծքը։ Թէեւ Գնէլը սպանուում է օպերայի 2-րդ գործողութեան ֆինալում եւ հեռանում օպերայից, սակայն հետագայ իրադարձութիւնների համար շարժիչ ուժը հէնց նրա անէծքն է։ Իշխան Գնէլի շունչը զգացւում է ամբողջ ժամանակ։ Նրա ուրուականը յայտնուում է 3-րդ գործողութեան ֆինալում, նրա մահուան վրէժը դառնում է գործողութիւնների յետագայ ծաւալման զօրաւոր խթան։ Ի տարբերութիւն «Ռիգոլետոյ» օպերայի, ուր Ռիգոլետոն օպերայի վերջում գիտակցում է, որ իր դժբախտութիւնների պատճառը Մոնտերոնէի անէծքն էր, «Արշակ»-ում դա տրուած է քօղարկուած, դրա մասին բացայալու չի խօսւում։

Աւելորդ չենք համարում կանգ առնել մի հնարքի վրայ, որ օդապգործել է Չուխաճեանն իր «Արշակում» դեռեւ 1868-ին, մինչդեռ Վերդիի «Արդայում» այն ի յայտ է եկել տարիներ անց՝ 1871։ «Արշակում» անմեղ հերոսները կեանքին հրաժեշտ են տալիս մաժոր լադում։ Գնէլի միակ ինքնուրոյն ծաւալուն համարից յետոյ (2-րդ գործողութիւնից սոլլ անէծքը) Չուխաճեանը կտրուկ շրջադարձ է կատարում բեմոլաւոր տոնայնութիւններից դէպի դիեզաւոր տոնայնութիւններ։ D dur – H dur – G dur տոնայնութիւնների տերցիային համադրումների չնորհիւ ստացւում է մաժոր եռահնչիւն։ Գնէլը հեռանում է կեանքից միանգամայն հանգիստ խղճով։ Սպանուելով անարդ թշնամու ձեռքով, նա անհծում է արքային եւ վստահ է, որ իր անէծքն անպատճառ իրականանալու է։

Օլիմպիայի մահառաջի արիան 4-րդ գործողութեան մէջ սկսւում է ժոլլ-ում եւ աւարտւում համանուն D dur-ում։ Տարիներ անց, Ռադամեսն ու Արդան նոյնպէս մեռնում են մաժորում՝

*Ges dur-ում. չէ՞որ նրանց մահով, այնուամենայնիւ, յաղթանակում է Սէրը: Նոյն կերպ է մեկնաբանում իր անմեղ հերոսների վախճանը Չուխաճեանը. մահերով լի օպերան հեղինակն աւարտում է G մար-ում, մեռնում են անմեղ մարդիկ, բայց անխուսափելիօրէն պատժում է Զարը, կործանուում բռնակալ Արշակը: Փաստօրէն, հերոսների մահուան համար մաժոր լադի ընտրութեան հարցում Չուխաճեանը կանխորոշում է Վերդիին:*

«Արշակում» բացայայտուեցին Չուխաճեան - դրամատուրգի լաւագոյն գծերը, այդ թւում՝ հերոսների ներքնաշխարհը վարպետօրէն թափանցելու կարողութիւնը, երաժշտական լեզուի արտայայտչականութիւնը, նուազախմբի դրամատուրգիական դերի ուժեղացումը, երգամասում ասերգի նշանակութեան մեծացումը, ցայտուն երաժշտական կերպարների ստեղծումը:

Հայոց անդրանիկ օպերան ստեղծուեց իտալերէն. այսօր մեզ է հասել Չուխաճեանի օպերայի ամբողջ ձեռագիր պարտիտուրը եւ չորրորդ գործողութեան ձեռագիր կլաւիրը՝ իտալերէն: Օպերայի հայերէն տարբերակը կորսուած է, թէեւ պահպանուել է 1871-ին կ. Պոլսում լոյս տեսած լիբրետոյի հայերէն տեքստը, որի հեղինակն էր Թովմաս Թէրզեանը:

Ի՞նչն էր պատճառը, որ հայոց առաջին օպերան ստեղծուեց իտալերէն: Սա Չուխաճեանի կեանքի եւ ստեղծագործական գործունենակութեան հեղթական առեղծուածներից է. չունենք ժամանակակիցների վկայութիւններ, ինքնակենսագրական նոթեր, կարող ենք լոկ ենթադրութիւններ անել: Ամենայն հաւանականութեամբ դրա պատճառն այն էր, որ հայրենիքից հեռու գըտնուող արուեստագէտը դրանով իսկ փորձեց ճանապարհ հարթել իր օպերայի կատարման համար, քանի որ հրապարակի վրայ գործող օպերային թատերախմբերը, բնականաբար, հայերէն օպերան կը գժուարանային երգել, Հայաստանում օպերային թատրոն այն ժամանակ դժբախտաբար չկար, իսկ Պոլսում էլ չկային մասնագիտական երաժշտական կրթութիւն ստացած համապատասխանագիտական երաժշտական կրթութիւն ստացած համապատասխան քանակութեամբ երգիչ-երգչուհիներ, սիմֆոնիկ նուազախումբը համալրող բարձրորակ երաժիշտներ: Ուստի, Չուխաճեանն իր օպերայի բեմական ուղին կարող էր հարթել միայն այդ ճանապարհով: Նոյն պատճառով էլ նա հետագայում այդ կերպ վարուեց իր կարապի երգը՝ «Զեմիրէ» օպերա-կախարդապատկերը գրելիս. առաջին հայկական հէքիաթ-օպերան նոյնպէս ծնուեց իտալերէն՝ Տիգրան Գալեմճեանի լիբրետոյով եւ բեմադնուեց իտալերէն՝ Տիգրան Գալեմճեանի լիբրետոյով եւ բեմա-

դրուեց 1894-ին, Կ. Պոլսում (Բերա) Ֆրանձինիի իտալական խըմբի ջանքերով՝ արժանանալով ջերմ ընդունելութիւն (ԳԱԹ Տ. Պուխաճեանի դիւանում պահպանւում է նաեւ լիբրետոյի հեղինակային ռուսերէն տարբերակը):

Յաւարտ խօսքիս ուզում եմ յուսալ, որ հեռու չէ այն օրը, երբ իրականութիւն կը դառնայ հայ մեծ Մաեստրոյի փափազը, եւ իտալական օպերային թատրոններից մէկում, ենթաղըենք, Վենետիկում, բեմ կը բարձրանան կոմպոզիտորի առաջին ու վերջին օպերաները՝ «Արշակ Բ» եւ «Զեմիրէն», գրուած իտալերէն, նախատեսուած նաեւ իր սիրելի Ռւսուցչի հայրենիքում կատարման համար: Եւ իտալական երաժշտասէր հասարակայնութիւնը հնարաւորութիւն կ'ունենայ ըստ էութեան գնահատելու եւ, համոզուած ենք, նաեւ՝ սիրելու հանճարեղ հայորդու օպերային երաժշտութիւնը ճիշտ այնպէս, ինչպէս սիրում ու երգում ենք մենք, հայերս, Զուզեապէ Վերդիի օպերաները: Դրանով իսկ կը գրուի եւս մէկ փառապանծ էջ հայ-իտալական երաժշտական առնչութիւնների դարաւոր պատմութեան մէջ:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐԵԱՆ

**Dikran Choukhadjian – Il Verdi Armeno**

(summary)

ANNA ASATRYAN

The Italians have named the Armenian opera founder, composer, conductor, pianist, educator and public figure Dikran Choukhadjian, " Il Verdi Armeno". After the death of the composer, the article "Armenian Verdi" was published in "Bazmavep" (1899), and in 1909 an article by Riccardo Torreni entitled "Il Verdi Armeno" was published in a Polish paper.

The above-mentioned article draws some parallels between Verdi's and Choukhadjian's life and creation. Both Verdi and Choukhadjian have not been accepted to the Conservatory of Milan and never had the chance to get the higher music education. They were just attended some private classes, being self-taught in opera. Opera has always been the main interest of the both composers, and their creative activity was crowned in 1893 with "Falstaff" by 80 year-old Verdi and "Zemireh" by 56 year-old Choukhadjian.

Neither before, nor after Verdi, Italy has never had such a miraculous composer gifted with the same intelligence and creativity in the field of opera composition. On the other hand, Choukhadjian has given a special importance to the Armenian music, having assisted to its development for a whole century.

Both Verdi and Choukhadjian have made huge deposits to the opera genre. The main attempt of this article is to reveal Choukhadjian's value and importance through his opera "Arshag II". In the final scene of the third act, which takes place in a graveyard, where ghosts approach to Arshag, Choukhadjian has created a modulating sequence, where the tonalities follow each other in a cross-like range: g – as – f – g. And the chromatic descending range of chords, always attached to the part of one of the opera heroes, creates the presentiment of his death in the next act.